պատմության զանազան շրջաններում։ Մանրամասնորեն նկարագրված են տարբեր ժողովուրդների հեթանոսական և քրիստոնեական պաշտամունքային հուշարձանների հատակագծերը։ Հեղինակը եզրակացնում է, որ հատակագծի հորինման հարցում ներքայեցվող տաճարը կետ առ կետ ձևված էր եգիպտական տաճարների սկզբունքին։ Բնականաբար, հայ ճարտարապետներն էլ հատակագծային հորինման հարցում մեկնակետ են ընդունել համաշխարհային դասական ձևերը։

Երկրորդ գլխում Հ. Մարգպանյանը խոսում է կառուցման արվեստի և տեխնիկայի մասին։ Սկզբում նկարագրում է եգիպտական, այնուհետև՝ Միջագետքի, սասանյան, պարսկական, հնդկական, չինական, էգեական, հունական, հռոմեական և հայկական արվեստի գործածած նախանյութերը և շինարարական տեխնիկան։ Երրորդ գլխում հեղինակը ուսումնասիրում է ճարտարապետական արվեստի մեջ ոճի և ձևի հարցը։

Գրքի չորրորդ մասում հեղինակը նկարագրում է Կարսի արևելյան կողմի գյուղերում իր կատարած ճանապարհորդության ընթացքում հանդիպած հայկական պաշտամունքային հուշարձանները։ Այստեղ տեղեկություններ են տրվում Բաղրիշանի, Ուղունքիլիսեի, Տիգնիսի, Արգինայի, Կարմիր վանքի, Օղուզլուի, Կեչրորի, Խծկոնքի, Բագարանի, Տեկորի, Կարսի, Հոռոմոսի, Բագնայրի, Անիի շուրջ 30 հուշարձանների մասին, զետեղված են հատակագծեր, նկարներ ու գծագրություններ։ Հեղինակը ցավով է նշում, որ միջնադարյան հայ ճարտարապետության այս կոթողները թողնված են բնության քմահաճույքին ու աստիճանաբար ավերվում են։

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀՈՒՆԱՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Մաշտոցի անվան Մատենադարանը հայերեն ձեռագրերից բացի ունի այլալեզու ձեռագրերի կարևոր մի հավաքածու։ Վերջինս ընդգրկում է մոտավորապես 2000 միավոր։ Սրանց թվում կան յոթ հունարեն ձեռագրեր՝ № № 12, 25, 31, 68, 69, 77 և 131[1]*։ Ստորև տալիս ենք հիշյալ գրչագրերի համառոտ նկարագրությունը։*

1 (ՀՈՒՆ. № 12)

Թուղթ (լուսադրոշմ՝ շրջանակի մեջ խաչիսխ), թերթ՝ 176, 180×120 մմ, միասյուն (140×90 մմ), տող՝ 21, ժմնկ.՝ XV դ.։ Բվնդկ.՝ Աղոթագիրք։

2 (ՀՈՒՆ. № 25)

Թուղթ (լուսադրոշմ՝ շրջանակի մեջ խաչիսխ), թերթ՝ 501, 205×145 մմ, միասյուն (140×90 մմ), տող՝ 18, ժմնկ.՝ XVI/XVII դ.։ Բվնդկ.՝ Կեղծ Դորոթեոսի՝ Բյուզանդական կայսրության ժամանակագրությունը, *որն ընդգրկում է մինչև 1571 թ. αφοα (թերթ 499բ)։*

Մատենագիտություն՝ Евгения Э. Гранстрем, *տե՛ս* «Византийский временник», *XI (1956), էջ 285—286։* Б. Горянов, *տե՛ս «Բանբեր Մատենադարանի», V (1960), էջ 317—323 (երկու արտատպություն) և* «Византийский временник», VIII (1960), *էջ 354—356։* И. Н. Лебедева, *տե՛ս* «Византийский временник», XXVI (1965), *էջ 101—102։*

3 (ՀՈՒՆ. № 31)

Թուղթ (լուսադրոշմ՝ բազմաթիվ), թերթ՝ 52, 215×160 մմ, միասյուն (180×120 մմ), տող՝ 23, ժմնկ.՝ XVIII դ.։ Բվնդկ.՝ Կանոններ *(245 խորագրերով)։*

4 (ՀՈՒՆ. № 68)

Թուղթ (լուսադրոշմ՝ մեծադիր, լուսադրոշմը անվերծանելի), թերթ՝ 37, 230×170 մմ, միասյուն (180×110 մմ), տող՝ 28 (14-ը խաղեր, իսկ 14-ը բնագիր), ժմնկ.՝ XIX դ.։ Բվնդկ.՝ Պատարագի երգեր։

5 (ՀՈՒՆ. № 69)

Թուղթ (լուսադրոշմ՝ մեծադիր, լուսադրոշմը անվերծանելի), թերթ՝ 4, 218×152 մմ, միասյուն (155×105 մմ), տող՝ 26 (13-ը խաղեր, իսկ 13-ը բնագիր), ժմնկ.՝ XIX դ.։ Բվնդկ.՝ Պատարագի երգեր։

6 (ՀՈՒՆ. № 77)

Թուղթ (լուսադրոշմ՝ շրջանակի մեջ խաչիսխ և շրջանակի մեջ վեցթևանի աստղ), թերթ՝ 136, 203×150 մմ, միասյուն (140×95 մմ), տող՝ 26, ժմնկ.՝ XV դ.։ Բվնդկ.՝ Սաղմոսարան։

7 (ՀՈՒՆ. № 131)

Թուղթ (լուսադրոշմ՝ շրջանակի մեջ գառնուկ), թերթ՝ 39, 160×103 մմ, միասյուն (97×54 մմ), տող՝ 16, ժմնկ.՝ XVI/XVII դ.։ Բվնդկ.՝ Կոստանդնուպոլսի ժողովի արձանագրությունները (879—880 թ.)։ *Պիտի նշել, որ*

---

[1] *Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի (աշխատասիրությամբ Օ. Եգանյանի, Ա. Ջեյթունյանի և Փ. Անթարյանի), Ա, Երևան, 1965, սյուն. 192։ Այլալեզու հուն. 131 ձեռագրի վրա մեր ուշադրությունն է հրավիրել Փ. Անթարյանը։ Մեր ձեռքի տակ հնագրական ալբոմներ չունենալով, հարկադրված ենք եղել ձեռագրերի թվականները որոշել լոկ հարաբերական ճշտությամբ։*

ձեռագրի 39-րդ թերթին հաջորդում են 160 սպաղիր էջեր՝ միևնույն ծավալի։ Երբայերեն բնագրին և լատիներեն թարգմանությանը զուգահեռ այստեղ առկա է Chronologia Hebraeorum maior-ի (էջ 8—127) և Chronologia Hebraeorum minor-ի (էջ 128—151) հրատարակությունը, կատարված ըստ «վենետիկյան» մի գրչագրի (Բազել, 1580)։

Հունարեն այս 7 ձեռագրերին պիտի ավելացնել նաև 17 պատառիկներ։ Դրանք մեծ մասամբ օգտագործված են եղել հայերեն ձեռագրերի մեջ որպես պահպանակներ[2]։

8 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 1)

Երկու թերթ, մագաղաթ, 150×117 մմ, երկսյուն (150×60 մմ), շագանակագույն թանաք, տող՝ 11, ժմնկ.՝ XII/XIII դ.։ Բվնդկ.՝ ծիսական (Թուղթ առ Եփեսացիս, Ա, 7—17. Առ Կորնթացիս Ա, Զ, 12. Առ Եփեսացիս, Ա, 22-Բ, 3. Առ Կորնթացիս Ա, Ժ, 23—28)։

9 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 3)

Երկու թերթ, մագաղաթ, 235×162 մմ, միասյուն (205×135 մմ), շագանակագույն թանաք, երկաթագիր, տող՝ 37, ժմնկ.՝ XI/XII դ.։ Բվնդկ.՝ Բարոյական խրատներ։ Մնթ.։ Անջատված Մատենադարանի № 5557 ձեռագրից։ Նախկինում պատկանել է Վանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցուն, № 189 (Ե. Լալայան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 217, № 104)[3]։

10 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 4)

Չորս թերթ, մագաղաթ, 210×140 մմ, միասյուն (135×90 մմ), շագանակագույն թանաք, տող՝ 24, ժմնկ.՝ XIV/XV դ.։ Բվնդկ.՝ Ծիսական։

Մնթ. Անջատված Մատենադարանի № 5008 ձեռագրից։ Նախկինում պատկանել է Լիմ անապատին, № 29։

11 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 5)

Երկու թերթ, մագաղաթ, 180×124 մմ, միասյուն (1) (180×130 մմ), տող՝ 18, (2) (180×95 մմ), տող՝ 15, շագանակագույն թանաք, ժմնկ.՝ XIII/XIV դ.։ Բվնդկ.՝ Պատարագի երգեր։

Մնթ. Տե՛ս Հ. Թոփճյան, Ցուցակ ժողովածուաց Դաղեան խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 37, № 67։

12 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 6)

Երկու թերթ, մագաղաթ (1) 170×120 մմ, միասյուն (140×100 մմ), տող՝ 27 (2) 147×105 մմ, միասյուն (147×85 մմ), տող՝ 24, սև թանաք, ժմնկ.՝ XIII/XIV դ.։ Բվնդկ.՝ Ծիսական։

Մնթ. Տե՛ս Հ. Թոփճյան, նշված ցուցակը, էջ 37, № 65։

13 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 7)

Երկու թերթ, մագաղաթ, 182×137 մմ, երկսյուն (160×115 մմ), տող՝ 19, շագանակագույն թանաք, ժմնկ.՝ XII/XIII դ.։ Բվնդկ.՝ Ծիսական (Ղուկ. ԻԲ, 15—26, Մատթ. ԻԶ, 40—50)։

Մնթ. Անջատված Մատենադարանի № 5170 ձեռագրից։ Նախկինում պատկանել է Լիմ անապատին, № 194։

14 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 8)

Երկու թերթ, մագաղաթ, 154×100 մմ, միասյուն (134×80 մմ), տող՝ 22, սև թանաք, ժմնկ.՝ XIII/XIV դ.։ Բվնդկ.՝ Ծիսական։

Մնթ. տե՛ս Հ. Թոփճյան, նշված ցուցակը, էջ 37, № 64։

15 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 9)

Երկու թերթ, մագաղաթ, 180×135 մմ, երկսյուն (155×110 մմ), տող՝ 19, շագանակագույն թանաք, ժմնկ.՝ XII/XIII դ.։ Բվնդկ.՝ Ծիսական (Մատթ. ԻԶ, 13—21, Հովհ. ԺԳ, 3—22) (տե՛ս ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 7)։

Մնթ. Անջատված Մատենադարանի № 5028 ձեռագրից։ Նախկինում պատկանել է Լիմ անապատին, № 222։

16 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 10)

Երկու թերթ, մագաղաթ, 380×298 մմ, երկսյուն (285×190 մմ), տող՝ 33, շագանակագույն թանաք, ժմնկ.՝ XII/XIII դ.։ Բվնդկ.՝ Մեկնություն հատված։

Մնթ. Անջատված Մատենադարանի № 5586 ձեռագրից։ Նախկինում պատկանել է Լիմ անապատին, № 122։

17 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 11)

Մեկ թերթ, մագաղաթ, 205×150 մմ, երկսյուն (193×130 մմ), տող՝ 46, սև թանաք, ժմնկ.՝ XIII/XIV դ.։ Բվնդ.՝ Ծիսական։

Մնթ. Անջատված Մատենադարանի № 5024 ձեռագրից։ Նախկինում պատկանել է Կտուց անապատին, № 219։

---

2 Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մատենադարանի, Ա, սյուն. 137։ Մեզ չի հաջողվել տեսնել Դր. Կուրտ Տրոյի „Die griechischen Handschriften des Neuen Textaments in der UdSSR— Eine systematische Auswertung der Texthandschriften in Leningrad, Moskau, Kiev, Odessa, Tbilisi und Erewan (XXIV, 355 մեքենագիր էջ) աշխատությունը, ինչպես նաև այն, որը նա հրատարակել է մի քանի տարի առաջ „Texte und Untersuchungen"-ում։

3 Պատառիկների մասին տեղեկությունները սիրով մեզ է տրամադրել Օ. Եգանյանը։

18 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 12)

Մեկ թերթ, մագաղաթ, 290×200 մմ, միասյուն (248×160 մմ), տող՝ 45, շագանակագույն թանաք, ժմնկ.՝ XI/XII դ.։ Բվնդկ.՝ Const. Apost., *VI, 6,7—10,2, հրատ.՝ Funk,* Paderborn, *1905, էջ 315, տող 10, էջ 323, տող 10 (Սիմեոն Մոգի մասին)։*

Մատենագիտություն՝ K. Treu, Ein Fragment der apostolischen Konstitutionen in Erewan, *տե՛ս* „Vigiliae Christianae". XI 4(1957), 208—211։

19 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 13)

Վեց թերթ, մագաղաթ, 250×182 մմ, երկսյուն (185×130 մմ), տող՝ 41, սև թանաք, ժմնկ.՝ XIV/XV դ.։ Բվնդկ.՝ Միսական:

20 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 14)

Մեկ թերթ, մագաղաթ, 191×150 մմ, երկսյուն (158×140 մմ), տող՝ 29/35, սև թանաք, ժմնկ.՝ XIII/XIV դ.։ Բվնդկ.՝ Միսական *(Թուղթ առ Կորնթացիս Ա, ԺԱ, 25—32, Մատթ. ԻԶ, 1—7 և 18—20, Հովհ. ԺԳ, 3—10, Մատթ. ԻԶ, 24—34 և 40—50)։*

21 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 16)

Մեկ թերթ, մագաղաթ, 148×55 մմ, միասյուն (130×55 մմ), տող՝ 16, շագանակագույն թանաք, ժմնկ.՝ XI/XII դ.։ Բվնդկ.՝ Մեկնուրյան հատված:

22 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 17)

Մեկ թերթ, մագաղաթ, 278×184 մմ, երկսյուն (240×160 մմ), տող՝ 60, սև թանաք, ժմնկ.՝ XIV/XV դ.։ Բվնդկ.՝ Միսական *(Մատթ. ԻԴ, 12—35)։*

23 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 18)

Մեկ թերթ, մագաղաթ, 224×150 մմ, երկսյուն (195×102 մմ), տող՝ 24, շագանակագույն թանաք, ժմնկ.՝ XI/XII դ.։ Բվնդկ.՝ Մեկնուրյան հատված։

Ծնթ. Ստացված հայեպարնակ Հովսեփ Հեդեյանից։

24 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ. № 19)

Թերթի մեկ բեկոր, մագաղաթ, մոտավորապես 165×25—40 մմ, տող՝ 3—4, շագանակագույն թանաք, ժմնկ.՝ XII/XIII դ.։ Բվնդկ.՝ Մեկնուրյան հատված:

Ծնթ. Անջատված՝ Մատենադարանի № 2593 ձեռագրից։ Նախկինում պատկանել է Տայքի և Տփղիսի առաջնորդ Կարապետ արք. Բագրատունուն, № 42։

Մեր նկարագրությունն ավարտում ենք հիշատակելով նաև հունարեն մագաղաթյա այն պահպանակները, որոնք գտնվում են ստորև բերված 51 հայերեն ձեռագրերում։ Դրանք են. №№ 141, 287, 527, 539, 586, 591, 612, 796, 8074, 812, 915, 919, 1038, 1049, 1192, 1197, 1201, 1249, 1251, 1297, 1373, 1424, 1544, 1547, 1601, 1624, 1634, 2105, 2164, 2168, 2274, 2983, 3461, 6122, 6953, 7095, 7168, 7371, 7378, 7470, 7477, 7517, 7643, 7650, 8163, 8254, 8452, 8546, 9456, 10382, 103855։ Այս պահպանակները գերազանցապես ունեն ծիսական և սուրբգրական բովանդակություն։ Ուշագրավ մի բացառություն է կազմում № 141 հայերեն ձեռագիրը (14-րդ դ.), որի սկզբում, բարձրորակ մագաղաթի վրա, պահպանված է Դիոսկորիդեսի մի հատված՝ VIII—IX դ. երկաթագրով։

25 (ՀՈՒՆ. ՊՏՌԿ.՝ հայերեն № 141 ձեռագրի)

Մեկ թերթ (պահպանակ), մագաղաթ, 220×165 մմ, միասյուն (130×210 մմ), տող՝ 19 և 11, շագանակագույն թանաք, գեղեցիկ երկաթագիր՝ փոքր-ինչ թեք (դեպի աջ), ժմնկ.՝ VIII/IX դ., տե՛ս Դիոսկորիդեսի De materia medica libri quinque, *հրատ.* C. Kuhn, Leipzig, 1828, I, *էջ 499—500։*

Մատենագիտություն՝ Евгения Э. Гранстрем, *տե՛ս* «Византийский временник», *XI (1956), էջ 285—286 (թերթի երկու երեսների լուսանկար արտատպություն)։* Ա. Ռ. Աբրահամյան, *Դիոսկորիդեսի պատառիկը («Էջմիածին», 1951, № 7—8, էջ 44—54։ Տե՛ս նաև նրա հետևյալ աշխատությունը. Մատենադարանի ձեռագիր գանձերը, Երևան, 1959, էջ 92բ)։*

* * *

Այս նշումներից կարելի է եզրակացնել, որ Մաշտոցի անվան Մատենադարանի հունարեն ձեռագրերն ու պատառիկները, որ ներկայացրել ենք վերևում 1—25 համարներով, ամբողջությամբ վերցրած խիստ կարևոր մի խումբ չեն կազմում։ Այնուամենայնիվ, նրանց թվում կան մի քանիսը, որոնք կարող են առանձին հետաքրքրություն ներկայացնել բնագիտության պատմության (№ 25), եկեղեցական ժողովների (№ 7), Բյուզանդական կայսրության անկման և օսմանյան պետության առաջացման (№ 2), նաև եկեղեցու հայրերի (№№ 16, 18, 21, 23, 24) պատմությամբ զբաղվողների համար։

Դ-ր ԷՐՆԵՍՏ ԲԻՀԵՆ (Բրյուսել)

---

[4] *Տե՛ս* K. Treu, Zu den neutestamentlichen Handschriften in der UdSSR, „Forschungen und Fortschritte"-*ում*, 38 Jahr., 1964, *մաս 4, էջ 121։*

5 *Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մատենադարանի, Ա, սյուն. 1416 և Բ, Երևան, 1970, սյուն. 1220։*